ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 29 » դեկտեմբերի 2021 թվականի N: 449-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N 54 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 25-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2021 թվականի մարտի 9-ի ««Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը հաստատելու և տնօրենի վարձատրության չափը սահմանելու մասին» N 54-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ ՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Որոշման 2-րդ կետում «650000 (վեց հարյուր հիսուն հազար)» թիվն ու բառերը փոխարինել «1400000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար)» թվով ու բառերով:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2021 թվականի դեկտեմբերի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝